պեռութեան սահմանների մէջ էր գտնվում այդ ժամանակ և Անգեղ–տանի մի մասը, եթէ ոչ ամբողջ գաւառը։ Անտանուն հեղինակը գիտէր նոյնպէս Ցարոնին և Անգեղ–տանը սահմանակից՝ Բագրատունիներին անձնատուր թոյլ գաւառի բնակիչների մասին, թէեւ նա չէ յիշում ուղղակի նոցա անունը և բաւականանում է միայն ակնարկելով նոցա "բարբարոսութիւնը", — այդ լեռնականների բնորոշ յատկութիւնը, որ դիտել են ծ դարու մեր. մատենագիրները[1]։

Այսպեղ արդէն կան այնպիսի հիմունքներ, որոնցից Անանունը կարող էր բիբլիական անունների մեկնեցումներ անել, այն է՝ Անգեղ ասուծու և բարբարոս ֆոռբ ժողովրդի՝ Անգեղ–տանի և բարբարոս Հայ ցեղի հետ (թոյլ)։ Իսկ այն իրողութիւնից, որ Բագրատունիները տիրել են, "Առաջին Հայքին" (Ցարոն) և նոցա հետ միասին գուցէ և Անգեղ–տանին, նա նոյնացրեց երկու անունների՝ Բագրատունիների կարծեցեալ նախահօր՝ Բազարատին, որի մէջ հեղինակը ոչ առանց հիմունքի ասուածութեան գաղափար էր տեսնում (գուցէ Աղաթանգեղոսի ազգեցութեան ներքոյ[2]), և Անգեղին, որի աստուածութիւնը հաստատվում էր Սուրբ Գրքից։

Ահա թէ որպիսի ճարտար, հանճարեղ և բարդ զուգադրութիւններ, սրպիսի նուրբ կշռադատութիւններ և ծածկախորհուրդ կոչմամբ նպատակներ ենք մենք տեսնում Անանունի Հայոց նահապետների անունների բնտրելու և յարմարցնելու մէջ, անունների՝ որոնք առաջին բերան երեւում են՝ իբրեւ մէջ բերած մէկը միւսի հետքից միանգամայն պարզ և բնական կերպով՝ առանց որ և է յետին մտքի, անգամ և առանց նպատակի։

Թրգմ. Լ. ՆԱԶԱՐԵԱՆՑ

Շարայարելի՝

---

1. Թովմա Արծրունի, էջ 120–121. Ցովհան կաթող. էջ 150.

2. Տես Վենետ. հրատ. 1862. "գայր (Տրդատ) հաւաներ ի քաղաքապետն Բագրատուան, որ անուանեալ կոչի ի պարթեւական լեզուէն Պիցաման"։

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ՀԱՅ ԼԵԶՈՒԻ Ե, Է, Ո, Օ ԳՐԵՐՈՒՆ ԸՍՏԱՍՍԱՆՈՒԹԻՒՆԸ

Բազմապէսպի անցեալ տարուան օգոստոսի Սոբրանդակով առաջարկուած էր հարցում մը հայերէն ե, է և ո, օ գրերուն հին ու նոր արտասանութեան եղանակի մասին. ներկայ յօդուածս ուղղակի պատասխան մը չէ թէ և նոյն հարցումին, սակայն անուղղակի կը շօշափէ զայն։ Մեր ե, է, ո, օ տառերը տարբեր հնչումներ ունեցած են անշուշտ հնագոյն, ըստ որում տարբեր գիրեր են. ա և օ գիրերուն հնագոյն հնչումը որոշել դիւրին է. առաջինն իբրեւ պարզ օ, և երկրորդը՝ իբր աւ (կարդալ առ, au)։ Աւելի դժուար է ե և է, սակայն շատ ալ հաւանական է որ ասոնց տարբերութիւնը, տեւողութիւնն եղած ըլլայ միայն. ե=կարճ է, իսկ է=երկար է՝, ինչպէս կը ցուցնեն օտար տառագարձութիւնները, մասնաւորապէս յիշելով յն. ε և η։

Նկատելի է թէ այլեւայլ լեզուներու մէջ հնագոյն երկար է յետոյ վերածուած է ի-ի. այսպէս անգղ. ee, հնապէս ee=է և այժմ ի. — յուն. η, հին հնչումով է և այժմ ի. այս երեւութին կը համաձայնի հայերէն է գրին ի-ի վերածումը հոլովեալ և ածանցական ձեւերու մէջ (սէր, սիրոյ, սիրել) ընդունելով է իբր է։

Այսպէս թէ այնպէս, սոյն գիրերը մեր նոր գրական ու գաւառական լեզուներուն մէջ առ հասարակ շփոթուած են. յօդուածիս բուն նպատակն է ուրեմն որոշել անոնց ուղղագրական կանոնները, եթէ երբեք կան, հիմնուելով գլխաւորապէս օրինակներու առաստութեան վրայ։

Ե և է գիրերը նախ երկու դիրք կրնան ունենալ. կամ կը գտնուին ձայնաւորի քով և կամ բաղաձայնի քով։

Երբ ե և է ձայնաւորի քով գտնուին, ասնոնցմէ իւրաքանչիւրը կը պահէ իրեն հա-

digitised by A.R.A.R.@

մաբ առանձին որոշ ձայն. ե տառը կը հնչուի իբրեւ յ (եւ. y). իսկ է կը հնչուի իր բնիկ սովորական է ձայնով. այսպէս՝ հրեայ, հայաւն, խարեռոբիեն, գրեիրդոր, անիդորդ, նեեսա, եօրն։

Այնպէս որ երբ այս յ հնչող ե-ը որ և իցէ պատճառով է ձայնն առանայ, է կը գրուի հակառակ իր առաջին ձեւին. օրինակ՝ հրեայ, հրեռոբիեն. գրիստոնեայ, գրիստոնեռբիեն. աշտեայ, աշտենեառոր, աշտեառոր։

Ուրեմն այս մասին ուղղագրական դժուարութիւն մը չկայ. գիրերը կը նշանակուին իրենց հնչումին համեմատ։

Դարձեալ, ե կամ է բաղաձայնի քով չորս գիրք կրնան ունենալ.

Ա. կը գտնուին բառին վերջը. օր. ասե.

Բ. կը կազմեն բառին վերջընթեր գիրը. օր. պարտեզ.

Գ. կը գտնուին վերջընթեր գիրքն առաջ. օր. խեցգետին.

Դ. կը գտնուին բառին սկիզբը. օր. եաւկան, եգ։

Այս չորս պարագաներէն իւրաքանչիւրն ունի իրեն համար առանձին օրէնք։

Ա

Առաջին պարագային՝ այսինքն երբ է ձայնը բառին ծայրը կը գտնուի, է կը գրուի և ոչ երբեք ե. օրինակ՝ Մատրէ, վանէ, ոստրէ, յուսեմնէ, ի սրտէ, և այլն։

Հնագոյն գրչութիւն է թէ (փոխանակ թէ)՝ որ այժմ գործածութենէ բոլորովին ինկած է։ Հիմայ այս օրէնքն այնչափ բացարձակ է՝ որ է կը գրուի նոյն իսկ այն պարագային՝ երբ բառին առոգաբանութիւնը ե. կը պահանջէ. այսպէս են օրինակ՝ գրէ, սիրէ, հնարէ, և այլն։ ուր եաւ փոխուած է է-ի. նմանապէս՝ թորեանք, աշտեայ, ափսեայ, քոռեայ կամ թորէ, աշտէ, ափսէ, քոռէ։

Է իբրեւ բառի մը վերջին տառը՝ հայերէն լեզուին համար շատ սովորական չէ. այսպէս է ունին միայն՝

1°. Եղակի բացառական հոլովը ինչ ինչ հոլովումներու մէջ. օրինակ՝ ի քանէ, ի գլեռ, տուռէ, ի քուռմէ, յուսեմնէ, ի ճամանէ, յիմեղքէ, ի միոչէ. և նոր լեզուով առհասարակ բացառականի համար՝ հացէ, մարդէ, կնոջմէ, աղչիկներէ, գեղմէ, ասկէ, և այլն։

2°. Բայերու ինչ ինչ ժամանակներու է-զակի երրորդ դէմքը. օրինակ՝ ասէ, առնէ, կեցցէ, բերէ. — նոր լեզուով կ'ըսէ, կ'ուզէ, թող թերէ, ըսէ՝։

3°. Ասոնցմէ դուրս կան նաեւ խումբ մը բառեր՝ որոնք բնապէս է-ով կը յանդին։ Այս տեղ հաւաքուած են Ա-ՅԻՆ ՔՈՒԹԻՆի (վենետիկ, 1865) մէջ գտնուած բոլոր այդ կարգի բառերը։

Աղէ, ամբարհաւանէ (հայ), անէ (գոյէ, նաւխէ, ոչէ), աշտէ (հայ), ափսէ (հայ), բարէ, բազէ (այ), բարէ, բացէ, բեւկէ կամ պեւկէ, բորէ (բորեան), գոնէ (հայ, եա), գուցէ, գրէ կամ գաէ, երայէ կամ երովէ, երէ, եփենէ կամ փենէ, գմէ (առ ի մէ), զուզէ (այ), զուրափէ (այ), թեկուէ, թերիակէ կամ թիւրակէ, թէ (եթէ, գրեթէ, քան թէ), թուրէ, թրանէ. ի-մարմինէ, իմնէ, ինգրէ կամ ինկրէ, իպպէ, իսրուայիդէ կամ սրօյայիտէ, կիրակէ կամ կիւրակէ, կորէ, հալուէ, հեռէ (յայսմհեռէ, յորմէհեռէ), հիւլէ կամ հիւղէ, մազտաքէ, մաշկէ (հայ), մարգարէ, մեգազէ, միթէ, միջօրէ, միօրէ (հայ), միւրիկէ, ոծղնէ (-նի, -նեայ), մոգպաշտէ, մորէ, յէ, նաւատաբէ, նեմէ, նէ (ա, դէ), ոստրէ (հինն ոստրէտա, ըէք), պախրէ, պենտեկոստէ (հայ), պրիստէ, պրէք, սամեռէ (-ՀՔ, -ԻՔ, -այք), սեբաստէ, սերոմբէ, սիպէ կամ սեպեան, սուրէ կամ սուրեր, սաաքտիկէ, վանէ կամ վաշ, վոռէ (վոռեաս), տապղէ, տարիմիւրէ, տրատէ, տրէ, բոպէ, փիլակէ կամ փիւղակէ, փորէ, քերծէ (քրծէ), քերոմբէ (քերոբէ, քրոմբէ, քրոբէ), քուէ (հայ), քսիւիրէ (իտա)։

Ինչպէս կը տեսուի գրեթէ, բայը այս օրինակները խոտելի են. ասոնցմէ մեծ մասը փոխառութիւն է օտար լեզուէ. ուրիշներ կը ներկայացնեն հայերէն բառի մը բացառականը, կամ քայլ մը ածանցն են և կամ կազմուած են է մասնիկով (փխ. —եայ). այսպէս՝ բացէ, հետէ, գմէ. — գոցէ, գռնէ. — աշտէ, մաշկէ, վիշօրէ, և այլն։ Դուրս հանելով նաեւ սէ, ճէ, դէ, նարտաբէ այս-

digitised by A.R.A.R.@

պիսի խայտառակ ձեւերը, իբրեւ բնիկ կը մնայ միայն հաղիւ տասը բառ. Աղէ, թէ-կոռէ?, թէ, երկ, մարգարէ, միթէ, պախրէ, վալէ, տրէ, քերծէ։

Բ

Երկրորդ պարագային՝ այսինքն երբ է ձայնը կը կազմէ բառին վերջընթեր տառը, կրնայ գրուիլ թէ՛ ե և թէ է. այս պարագային կախում ունի յաջորդ՝ այսինքն բառին վերջին տառէն։ Տառեր կան որ կը պահանջեն ե և կան ալ որ կը պահանջեն է. կան նաեւ տառեր որ կը պահանջեն թէ՛ մին և թէ միւսը։

1°. ե կը պահանջեն բ, լ, խ, կ, հ, ղ, մ, ռ, ր, ս, փ, ք։ Օրինակ՝

Թ. — արեթ, ամեթ, անմեթեթ, բեթ՝ քամուած ձէթ, երեթ, եւեթ, ձաշակեթ՝ աղջիկ զաւակ, գուտոր, սեբեեթեթ, քրեթ՝ քթամէջ չուան, փաբեթ՝ կծիկ։

Երեթ բառը (երեթն առեալ՝ հինցած, մաշած) կը գրուի է-ով. թէեւ կայ երիթացեալ՝ հին, մաշած, պատռատուն՝ որ կը պահանջէ երեթ ձեւ մը։

Բակեղեթ, գմբեթ, գեթ, խեթ (և ասկէ բանխեթք՝ բանցի հրել, զարնել) կը գրուին թէ՛ է-ով և թէ է-ով. կանոնին յարմար է գրել է-ով։

Բացառութիւն են ձեթ և Յակեմեթ՝ անվաեր Գործք Առաքելոց։

Լ. — առաւել, աւել, թել, խել-ք, բայերու անորեւոյթները՝ սիրել, խօսել, և այլն։

Գել՝ ծուռ, կել՝ գաւ, նենգութիւն կը գրուին թէ՛ է-ով և թէ է-ով. կանոնաւոր է գրել է-ով։

Բացառութիւն կրնայ համարուիլ յեսին և օտար տամոռժել կամ տամնջել՝ օրիորդ, որ արդէն գործածուած է։

Խ. — սեխ, մեղմեխ, մեղեխ, մծեխ, պեխ։

Բացառութիւն չունի։

Կ. — օրեկ, ձայեկ, բեւեկ-ն, դեկ, պաբեկ, բեպեկ՝ կապիկ, բեկ՝ և ասկէ խեկրեկ, ծնեբեկ, քարբեկ, և այլն, սարեկ, ռեկ՝ ճեզբուած ալիք, իրազեկ, արեկ՝ զօրաւոր, բարեբ. պոեկ՝ պզտիկ փարշ, ռամեկ՝ սիրամանքել, ցերեկ, սեկ, սերեկ՝ կաշիէ խուփ, երեկ՝ երեկոյ, փեձեկ։

Կան եաւ վերջացող խումբ մը բառեր որոնք սղուելով կ'ըլլան եկ. օր. կլայեկ, հմայեկ, ցախաարեկ, և այլն։

Երրայեցերէն Սորեկ՝ ազնիւ որթ մը՝ կը գրուի Սորեկ, Սորեկ, Սորվրեք. կանոնաւոր է գրել է-ով։

Երեկ (օր) կը գրուի է-ով՝ դանազանելու համար երեկ (երեկոյ) բառէն։

Շեկ, բեկեն (թիկունք) կը գրուին թէ է-ով և թէ է-ով. կանոնաւոր է գրել է-ով, թէ և բարդուած բառերը ի կը ցուցնեն. շիկերբ, բիկեեղ. հմմտ. պնակաղեզ, ղեզոռ, ղիզեղ. — դեռ, դիռի, դիռակաեն, դիռաեհար։

Անորոշ բառ է պատշեկ կամ պատշեեն՝ շոյ, ճաճանչ, ճառագայթ։

Բացառութիւն են աղեկ, մեկ, աբարեկ. երեքն ալ յետին. որոնց կանոնաւոր ձեւը պիտի ըլլար աղեկ, մեկ (միակ. ինչպէս կան մեկ-ին, մեկ-նակ, և այլն). բեկ, աբարեկ՝ օտար է։

Հ. — հրդեհ, Զարեհ՝ յատուկ անուն և հասարակ անուն՝ ծովեղերեայ խոտ մը, դեհ, վեհ, պատեհ, գտեհ, նեհ, նեղեհ։

Բացառութիւն չկայ։

Ղ. — աղեղ-ն, ասեղ-ն, դեղ, շեղ, թիրեղ-ն, կանթեղ, բաղեղ-ն, ուղեղ, մղեղ՝ փոշի, մնչեղ՝ ծառի անուն, մծեղ, հեղեղ, ասեղ՝ անուին տեղի ծայրը, նեղ, կեղ. — եղ մասնիկը՝ զօրեղ, ուժեղ. — ղ յանգող բառերու սեռականը՝ ասուեղ։

Բացառութիւն է բեղք՝ թել, թելերու շարք։

Մ. — նեամ, համեամ, խոհեամ, վեամ, ձեամ, սչեամ, կոտեամ-ն, ուրեամ-ն, ռատեամ-ն, պեամ-ն՝ արու վայրի թզենի, պեամ՝ վարդի փուշ. — բայերու եզակի առաջին դէմքը՝ սիրեամ, իցեամ, և այլն։

Հեամ՝ այժմ, հիմայ. բեամ՝ վիճակ կը գրուին թէ՛ է-ով և թէ է-ով. կանոնաւոր է գրել է-ով։

Բացառութիւն են դեամ՝ (և ասկէ բարդուածները՝ ընդդեամ, տարադեամ, դեամք, և այլն), և վեամ։

Ռ. — սեռն, սիսեռն, բեռ-ն, խեռ, սեռ, տեռ՝ շղարշ, ձեռ-ք, գեռ, տիտեռ-ն՝ նշանագ, կոկորդիլոս, նեռ-ն, բեռեռ, հեռ։

digitised by A.R.A.R.@

Բամիսրէն չեմ՝ մէջ ուղղագոյն է գրել չեմ։
Բացառութիւն չկայ։

Ը. — պատկեր, սեպտեմբեր, թեր, գեր (գեր ի վերոյ), թեր, ծեր, կեր, կերկեր, ֆեր, ձեր, մեր, ներ, աներ, աւեր, ատուեր, գիշեր, եպեր, երեր, ջեր, սեր, վեր, տաս-տեր, վաւեր։ — ինչ ինչ բառերու եզակի սեռականը՝ աչեր, աղրեր, — թատեր, սակեր, տարեր, և այլն։ — Ցոքնակիի մասնիկը նոր լեզուին մէջ՝ (վանեաբ) վաներ, (նաս-կնեաբ) նաւիկներ։ — եր մասնիկ բայի այլ-եայլ ժամանակներուն մէջ. կերեր, ըսեր, լեմ ուզեր, ներկայ, անցեալ և ապառնի ի-մասասի. զոր արեւելեան հայերէնը նոխա-բար կը բացատրէ երեք տարբեր ձեւերով. այսպէս.

Մինչեւ այսօր չեմ ուզեր, հիմայ ալ չեմ ուզեր և այսուհետեւ ալ չեմ ուզեր.

Մինչեւ այսօր չեմ ուզել, հիմայ էլ չեմ ուզում և այսուհետեւ էլ չեմ ուզի։

Բոխասեր՝ զժուարանցնելի, կը գրուի նաեւ բոխասեր (ե-ով). կանոնաւոր է առաջինը։

Ցարբեր ուղղագրութեամբ տարբեր նշա-նակութիւն ունին հետեւեալ բառերը.

Գեր՝ գեր ի վերոյ — գէր՝ պարարտ, յոյր.

Սեր՝ սիրել. — սեր՝ կաթի սեր.

Վեր՝ բարձրը, վերը. — վեր-ջ՝ կեղ, վի-ճարորուած.

Ընդէր՝ ինչու, էր բառէն. — ընդեր-ջ՝ փորոտիք.

Շեր՝ տիւրաքս ծառին խէժը. — Շեր՝ երդ, շարական։

Բացառութիւն են — հրաեր (և ասկէ՝ փեսաեր, ճարանաեր՝ իրը փեսայահրաւէր, հարսնահրաւէր), պատուեր, նուեր, վատ-շուեր (և ասոր հետեւողութեամբ չարաշուեր) և տեր։ Բացի այս վերջինէն՝ միւս բոլոր բառերն ալ ոեր կը վերջաւորին։

Ա-յեռն բառարան կը նշանակէ յունա-բինէ առնուած հետեւեալ անգործածական բառերը. արգասատեր՝ գործարան, կիմեատեր՝ գեսնապոր գիրեզման նահատակի, և տրիեր՝ եռաթի ցոկանաւ։

Բացառութիւն է նաեւ բայերուն անկատար եղ. գ. ղէմքը. ասեր, սաեր, կ'ուտեր, և այլն. որ այսօր զանազանութիւն կը կազմէ ներկայ ընդունելութեան հետ (արեւմտեան հայերէնի մէջ). լեմ ըսեր և լքսեր, չ'ըսեր։

Ե. — սեր, թեր, արեր, տերեր, ակներ, անձրեր, դեր։

Թէ և վերջինն ունի դիւահար, դիւակաճ, դիւի, դիւաց, և այլն ձեւերը, սակայն արմատը ե ունի և ոչ է (դեր)։

Բացառութիւն չկայ։

Փ. — թեփ, լեփ՝ խոր և գարուսվար, խեղեփ՝ բեկոր, զոյգ, խլեփ՝ անուշահոտ ոտնի. ծեփ, կանեփ, հացդուշեփ՝ սրկրամոլ, շատակեր, շերեփ։

Բացառութիւն չկայ՝ եթէ ոչ Ալեփ՝ եր-բայեցերէն սաալֆին գիրին անունը։

Ք. — մեք, ուրեք, ուստեք, ուսմեք, երեք, չորեք, բարեք (բարեքի, բարեքիկ), թեք, (որմէ դիւրաթեք, նորաթեք, և այլն), պատեք, կեղեք։

Անգործածական չեք՝ ճհ, ճհ, վսեմ, գե-բազանց, ուրախալի. թեք՝ շատ լաւ, մեծ, զօրաւոր, վայ, կը գրուին թէ՝ ե-ով և թէ ե-ով. կանոնաւոր է գրել ե-ով։

Հեք կամ՝ հեգ լաւագոյն է գրել միայն հեգ՝ որ կանոնաւոր է, խոյս տալու համար հեք ձեւէն։

Երբեք կանոնաւոր է գրել երբեք՝ ե-ով։

Բացառութիւն են 1°. բայերու յոգ. բ. դէմքը. ասեք, ասեք, կ'ուտեք.

2°. եք մասնիկը՝ փոխանակ այք. մերձեք, ձեռեք, մատնեք, քօղեք, և այլն.

3°. հետեւեալ անգործածական բառերը. կոձեք՝ քթի պախուրց, միահանեք՝ խաղ, կատակ, փեք՝ խեղճ, թշուառ, սովրեք կամ սովրեկ, սովրեկ՝ ազնիւ որթ մը։

Իսկ Մարտիրոսեք՝ « վկայաբանութիւնք սրբոց » և սպուռեք՝ « Ջանացող երեւելի կրօ-նաւորք, ճգնաւորք » յոգնակի ձեւեր են։

Գ°. Է. կը պահանջեն գ, գ, ժ, ձ, ն, շ, լ, ջ, ս։ Օրինակ՝

գ. — եղեգ-ն, վեգ, տեգ, մեգ, հեգ։

Սեգ՝ կը գրուի թէ ե-ով և թէ է-ով. կա-նոնաւոր է գրել սեգ։

Հեգ՝ վանկ, ե-ով կը գրուի զանազանելու համար հեգ՝ թշուառ բառէն։

Բացառութիւն է արեգ։

digitised by A.R.A.R.@

Զ. — պարտէզ, մէզ, մողէզ, դէզ, սէզ, արեւակէզ, պճնակալէզ, կոճղէզ, տապարէզ, թզէզ։

Բեհեզ, գէզ կը գրուին թէ՛ ե-ով եւ թէ է-ով. կանոնաւոր է գրել է-ով։

Բացառութիւն են քեզ, ձեզ, մեզ խումբը (որոնք այսպէս կը գրուին մեք, մեր, մեօք, եւ այլն, ձեւերուն նմանողութեամբ), հեզ, դենիմազդեզն։

Մեզ եւ մէզ բառերուն մէջ նշանակութեան տարբերութիւն մը կայ։

Ժ. — վրէժ, մժէժ, խէժ, գաճավէժ, շրէժ, թէժ՝ վարագոյր։

Յաւէժ՝ որ կը ծագի յաւերժ բառէն՝ ր-ի անկումով, կանոնաւոր է. անկանոն յաւեժ գրչութիւնը՝ որ սովորական եւս չէ, ծագած է յաւերժ բառէն՝ նմանողութեամբ։

Բացառութիւն չկայ։

Ճ. — վէճ, գէճ, թէճ։

Բացառութիւն չկայ։

Ն. — չէն, քէն, հէն, կոճկէն, ապառազէն, անդէն, պատճէն։

Խումբ մը բառեր՝ որ ստուգաբանօրէն ե-ով պիտի գրուէին, է-ով կը գրուին՝ ն-ի քով լինելուն համար. աշտեայ, աշտէ, աշտէն. տօնեչեան, տօնեչենային, տօնեչէն. պատճեան, պատճէն. քաղեան, քաղէն. թորեան, թորէ, թորէն։ Ասոնց համեմատ՝

Գեհեան, ցորեան, իշեան, առեան, բլիթեան, վզեան կորսնցնելով իրենց վերջընթեր ա տառը՝ պիտի գրուէին գեհէն, ցորէն, իրէն, առէն, բլիթէն, վզէն՝ ուղիղ կանոնին համաձայն. բայց կը գրուին գեհեն, ցորեն, իրեն, առեն, բլիթեն, վզեն՝ հակառակ կանոնին։

Ամենայն համառօտութեամբ եղած է ամէն՝ որ հին ձեւով կը նշանակէ նաեւ եղիցի. բայց զանազանութեան համար եղիցի նշանակութեան կարելի է յատկացնել ամեն ձեւը։

Հեղէն կը գրուի նաեւ հեղեն. կանոնաւոր է գրել է-ով։

Ջէն՝ զոհ, մատաղ կը գրուի ե-ով՝ զանազանելու համար զէն (զէնք) բառէն։

Իսկ թ, կ, մ, գիրերուն անունները կը գրուին թէ թեն (որմէ այրուբեն), կեն, մեն եւ թէ թէն, կէն, մէն։ Այս վերջին ձեւերն աւելի կանոնաւոր են։

Բացառութիւն են դեն, համակդեն, ադեն, ձեն՝ օտար եւ այժմ անգործածական բառերը։

Նաեւ բայերուն յոգ. գ. դէմքը. առնեն, տան, սիրեն, կը բերեն։

Անորոշ է պատշեն կամ պատշէն՝ լոյս, ճառագայթ։

Շ. — շրէշ, խեճէշ, ողէշ, պատճէշ, գէշ, հրէշ։

Ողէշ, խեճէշ կը գրուին նաեւ ե-ով. կանոնաւոր է գրել է-ով։

Խարտեաշ համառօտելով կ'ըլլայ խարտեշ եւ ուղիղ կանոնին համեմատ խարտէշ. Աշխ. բառ. կը նշանակէ թէ՛ մին եւ թէ միւսը, լաւագոյն է վերջին ձեւը։

Բացառութիւն չկայ։

Չ եւ Ջ քիչ գործածական են. առաջիններն կան՝ մէչ, առէչ կամ առէչ, ելեշէչ, գէչ, թէչ՝ կոնակ։ Իսկ երկրորդէն կան՝ խեջ՝ խաղողի ճզմած կեղեւները եւ խեջ կամ խէջ՝ նեցուկ, հագուստի գրպան, խեչափառ։

Ջ կանոնաւոր է եւ առանց բացառութեան։

Չ-ի համար թէեւ օրինակները բաւական չեն, սակայն նմանողութեան օրէնքով կարելի է ընդունիլ թէ այս ալ է կը պահանջէ. որով եւ զանազանութեան համար կարելի է երկու օրինակներէն առաջինը պահել՝ ինչպէս որ է, եւ երկրորդը գրել միայն խէջ ձեւով։

Բացառութիւն է չեչ՝ մանրուք, մնացորդ, գիրտ, — ծակ, ցան (երեսի) քարի, մեղրի բջիջ, խաղողի կեղեւ, եւ այլն։

Ս. — վէս, գէս, ապարէս, այսպէս, այնպէս, կրկէս, հանդէս, մեծամէս։

Դիտելի են — մեծամէս որ ստուգաբանօրէն պիտի գրուէր մեծամեց (իբրեւ կրկնութիւն մեց բառին) = մեծամես. նմանապէս եռեակ՝ երէց (ե-ով), բայց եռիէս՝ է-ով։

Բացառութիւն են երես, տես (եւ ասկէ բարդուածները՝ տեսուս, գաղտատես, եւ այլն)։ Նոյնպէս յուշարձէք փոխառեալ անգործածական պռոբես = պռոբեմիոս՝ առաջաբանութիւն։

Նաեւ բայերուն եզ. բ. դէմքը. ռանես, առնես, տաս, կը սիրես, սիրեցես։

3°. Երբեմն է եւ երբեմն ե կ'առնեն ծ, ց, պ, տ գիրերը։

digitised by A.R.A.R.@

Ը և ց, և կ'ուզեն երբ միավանկ է բառը. օրինակ՝

— Մեծ, ծեծ, հեծ, քեծ, ցեծ.

— Հեց, խեց, վեց, յեց, սեց, ցեց, քեց (քեցել)։

Իսկ բազմավանկ բառերու մէջ է կը պահանջեն.

— Ահեծ, ստեծ.

— Երեց, ռռեց-ք, ցեցամեց, ընկեց։

Մեց — ցեց բարդութիւով կ'ուտայ ցեցամեց՝ որ կը գրուի է-ով բազմավանկի վերածուած ըլլալուն համար. իսկ այս ցեցամեց-էն կը ծագի մեց գրութիւն մը՝ որ անկանոն է։

Նշանախեց, մեծամեծ բարդերը պահած են իրենց ընիկ ձեւը։

Ցեծ, ստեծ, ռռեց-ք կը գրուին նաեւ ցեծ, ստեծ, ռռեցք. առաջիններն աւելի կանոնաւոր են։

Դիտելի է որ ընկենուղ բայը կու տայ ընկեց (փխ. —եաց, —եց)։

Բացառութիւն է չանգեծ՝ պակասաւոր լուսին, եթէ հեծ բառէն չէ բարդուած։

Ո և Ա գրերը չունին որոշ կանոն. ուստի և այս տեղ կը հաւաքեմ Աբեղեան Բառարանի մէջ գտնուած բոլոր բառերը։

Ո Նախատառ է-ով. — Ալփարեռ, անուֆեռ, անշրպեռ, ասպեռ, արահեռ, առեռ (աւեռս), գեռ, գնեռ, կեռ կամ կեռ՝ վիշապ, կեռ. կծպեռ՝ զոպած, սեղմած, նեղ, համեռ, հեռ (միասին և հեռք), ձեռ, ձեռ, յեռ (վերջ), ճեռ, ճովպեռ՝ հովիւ, շպեռ՝ հովիւ, սկեռ, (որմէ հայրապետ, վարդապետ, վարժապետ, և այլն), սեռ, (ռեռին), սպեռ (ապեռ)՝ փառաւոր, պայծառ, պարեռ կամ պարեռ՝ վերակացու, սամեռ՝ սամեռէք, սպանդարամեռ, ցեռ՝ ձեռ, փեռ (որմէ դասատեռ, ահափեռ, և այլն)։

Ո Նախատառ է-ով. — Ադապեռ՝ օրական աւանելիք, ադեռ, աշխեռ, սանեռ, սաեռ (իբր մնամեկ. շահաւեռ, ծառաւեռ, և այլն), թրեռ՝ իշամեղու, գեռ (որմէ յանգեռս, անգեռ, և այլն), գեռ, գանգեռ, թեպեռ, ժեռ (մնամեկ՝ ախաւաժեռ, որկորաժեռ), խայտաբղեռ, կեռ՝ վիշապ ձուկ և կեռ, հանգեռ, հիւսկերեռ, մակարդեռ, մեռ (անմեռ, և այլն), յաչեռ, նայաւեռ կամ նաւեռ, պարեռ՝ պաղատանք, պարեռ կամ պարեռ՝ վրակեցու, պարեռ, պեռ (պեռք, յովպեռ, յուսպեռ, և այլն), պոռեռ, վեռ։

Ա Նախատառ է-ով. ապաչեպ, ապդեպ՝ ապդեպս բերել, "ոգբաշ, սիրաբ խշխշալ, սասցուածին մէջ, խեձեպ, ձեպ՝ (հապճեպ, և այլն), շեպ, շերեպ (փխ. շերեփ), սեպ։

Ա Նախատառ է-ով. — գեպ (հանդեպ, տարադեպ, և այլն), երաշխեպ, ստեպ, վեպ (նորավեպ, սիրավեպ, բազմավեպ, և այլն) վրեպ։

Ինչպէս կը տեսնուի ասոնցմէ դուրս կը մնան բ, գ, ձ, յ, վ գիրերը. ասոր պատճառն այն է որ հայերէնի մէջ չկայ բառ որ այս գիրերով վերջանայ Նախատառ է-ով կամ է-ով. բ, ջ, ֆ բարդովին կը պակսին. վ միշտ ա-ի կը վերածուի այս տեսակ պարագաներու մէջ, և կը պահանջէ իրմէ առաջ է. իսկ դ այս գիրքով կարծեմ թէ հակառակ է հայերենի ոգիին. որովհետեւ շինծու ձեւեր են բդեդ, խեդ, անհեդեդ՝ փոխանակ ըսելու փաթեթ, խեթ, անհեթեթ. իսկ միակ ուղիղ օրինակ *աբեդ (ինչպէս կը պահանջէ հայերէնէ փոխառեալ վրացերէն աբեդի ձեւը), վերածուած է աբեթ։

Գ

Երրորդ պարագային՝ այսինքն երբ է ձայնը կը գտնուի բառին վերջնամեր գիրէն աւելի առաջ և առաջին գիրէն վերջ, միշտ է կը գրուի և ոչ երբեք է. օրինակ՝ սեպտեմբեր, եկեղեցի, ձերմակ, բերան, սերմ, բերկրութիւն, մեղեդի, հերտ, երեսեղի, փեռեզակ, գեղեցիկ, յեղուզակ, և այլն։

Այս օրէնքը կը գործէ ոչ միայն արմատական, այլ է բարդ կամ ածանցեալ բառերու մէջ կամ պատահաբար, կամ դիտմամբ՝ հետեւեալ կերպով.

Բնապէս վերջնամեր է ունեցող բառերը բարդութեան մէջ փոփոխութիւն չեն կրեր, որով օրէնքը կը մնայ անխախտ. օրինակ. առնչաժառ, հնդեղանման, վաղաբեր, ցանասեղ, ադեղանմ, հրդեհի, և այլն։

Իսկ անոնք՝ որոնց վերջնամեր տառը է է,

digitised by A.R.A.R.@

սովորաբար կը փոխուին ի-ի, թէ՛ հոլովուած, թէ՛ ածանցուած և թէ բարդուած ժամանակ. օրինակ՝ վրիժառու, միգի, աղուհիսու, պարտիզաց, գիտուն, և այլն։ Այսով կանոնին բացառութիւն չեն կազմեր պատահաբար։

Կայ սակայն ստուար մաս մը այս բառերուն մէջ՝ որոնք բարդութեան կամ հոլովուելու ժամանակ իրենց է ասոր կը փոխեն ե-ի. այսպէս՝ աղուէս, աղուհիսու, բայց աւելի հարազատ՝ աղուեսու. նմանապէս եղեգն, եղեգան, եղեգնիկ, եղեգնափող, և այլն. գմբեր, գմբերս, գմբերարդ. զեղընկեց, քարընկեցուրիւն, պատմենի, պարենաւոր, ախտաժէտ, որովայնաժէտուրիւն, ախտաւոր, սուրբիւն, որկորաժէտուրիւն, անտերունչ, ընչաւետանալ, ժաղկաւետիլ, շահաւետիլ, աշխատանի, խաչտաբղեսուրիւն, կնատարդուրիւն, քերբեշիլ, քեշկարկատ, բենական, տուրնկենային, յաւժական, կոնկենիկ, գրեբք, թեպետ, խերահար, լեզ, լեզու, լիզել, պուռետ, պուռետս, և այլն, և այլն։

Այս փոփոխութիւնն եղած է դիտմամբ և ոչ պատահաբար. և ասոր ներքին պատճառն ալ վերի կանոնը միայն կրնայ լինել և ոչ ուրիշ բան. ինչպէս որ նոյն այս պատճառէն դրդուելով դեռ կը գրուի և ոչ դեռ, ձեռ՝ որ կը հետեւի դիւական, դիւահար, և այլն, բարդերէն և պիւռ, դիւաց հոլովներէն։

Վերջընթեր է ունեցող բառերը բարդութեան մէջ կրնան մնալ նաեւ է-ով, և ասով կը կազմեն բացառութիւններու թիւ մը, եթէ պէտք է իրօք բացառութիւն համարել ասոնք։ Սակայն սա կը պատահի խիստ քիչ անգամ և աւելի յետնաբար։

Այստեղ հաւաքուած են Ա-ի-ի մէջ յիշուած սոյն կարգի բառերը.

1°. Օրենդիր, վրէժխնդիր, տեղընկեց, դեստակն, այդրենագիրն, դեմականք՝ մտիկ ընողներու բազմութիւն, քենանատոյց, տեռորաբիւն, տերոռնական, և այլն (կայ նաեւ տերոռնի)։

2°. Շերասաց, աղէլկտակ, սերոնսիրտ՝ պաղուկ քսմի սիրտ զովացնող։

Այս երեք տեսակ փոփոխութիւններուն մէջ (ի, ե, է) յայտնի է թէ նոր, վերլուծական լեզուներու ոգիին անյարմար են առաջին երկու փոփոխութիւնները. ուստի և բանաւոր է գործածել միայն վերջինը. և գրել վրէժի, ամենեն, աղեստալի, պատանենաւոր, և այլն, և այլն։

Ի-ով վերջացող բազմավանկ բառերը բարդութեան մէջ կը վերածուին ե-ի. որով դարձեալ բացառութիւն չեն կազմեր ընդհանուր կանոնին։ Սակայն յետին գրիչներ ունին նաեւ է-ով՝ որ յայտնի սխալ է. օրինակ՝ ողբեպաշիք, խնոցեհար, ալեկոծ, և այլն։

Է յանգող բառ մը բարդութեան մէջ ա յօդակապը կ'ստանայ, որով դարձեալ կանոնին բացառութիւն չկազմուիր. օրինակ՝ հրեայ, հրա—, հրեական. երեքատաս, և այլն։

Ողուած ձեւ է կիրակեմուտք՝ եթէ կիրակի ձեւէն չ'ծագիր։

Գրչագրի սխալ է է իբրեւ յօդակապ՝ փոխանակ ե-ի. օրինակ՝ բիկնեբեկին՝ վայելուչ կերպով ուսերը շարժելով քալուածք, ապեկարժ = յեղակարծ, բրեգած = բրատոր, կանեայեկան = կնոջական։ Այս բառերը ցաւագոյն է գրել ե-ով։

Երբայեցի կամ յոյն են ասփոդելոն, կիրեկեան, կիմեսեր՝, սալէբին, տեբրիեկես, սեբասեբիմ, ստեքերովն կամ ստիքերովն, պէլգեպուզ, պեգասոս, իկոսաեդրոն, մաթեմատիկոս, ալեյոս, որոնցմէ գործածական են միայն վերջին երկուքը. կանոնաւոր է գրել մաթեմատիկոս, ալեյոս՝ ինչպէս որ արդէն կան գրուած։

Պերոզ, պերոզոս, շերաս, բեշկ մշկոյ, հերայ, քեշկարկատ, թեպետ, գրեբք, սեբրարիփ (սերսիբէ), վեստ (իշխան), լեզոզ կը գրուին նաեւ է-ով՝ պերոզ, պերոզոս, շերաս, բեշկ մշկոյ, հերայ, քեշկարկատ, թեպետ, գրեբք, սեբրարիփ, վեստ, լեզոզ. կանոնաւոր է գրել միայն է-ով։

Ցաւերդ կը գրուի թէ է-ով և թէ է-ով. ինչպէս կայ յաւեժ կամ յաւեժ. կանոնաւոր է գրել յաւեժ (է-ով) և յաւերժ (է-ով). միայն։

Զսաս բացառութիւն են խանիկեար՝ բոյս մը, աղեկատ, կեշկեշալ, քենք՝ քած շուն, կատաս, և պէլասպիկ։

digitised by A.R.A.R.@

Դ

Զորրորդ պարագային՝ այսինքն բառին սկիզբը ե և է չունին ուղղագրական դժուարութիւն, անոնցմէ իւրաքանչիւրը պահելով որոշ ձայն. եգ, երկինք։ Է՝ բառին սկիզբը չէ այնչափ սովորական, որչափ ե. (այս վերջինը սովորական է մանաւանդ ղ և ր գրերուն հետ. իսկ ուրիշ գրերու քով կը հանդիպի առհասարակ օտար բառերու մէջ)։

ո և օ

Մեր լեզուին մէջ ո և օ իբրև ձայնաւոր տառ չեն կրնար գտնուիլ ուրիշ ձայնաւորի քով. այսպիսի պատահման տեղի կ՚ունենայ միայն նոր և օտար բառերու մէջ. և այս պարագային սովորաբար կը գրուի օ, զոր օր. պօա օճ, իօաքիմ, և այլն։

Բառին ծայրը բնիկ հայ ձևն է ոյ և ոչ երբեք ո կամ օ. իսկ նոր և օտար բառերու կամ գաւառական կրճատումներու համար կը գործածուի օ. ինչպէս՝ յետոյ, Աստուծոյ. — Պետօ, ծօ՛։

Բառին սկիզբը ո գրական լեզուին մէջ կը հնչուի վօ, իսկ օ պարզապէս օ. ուրեմն այս մասին ետև ուղղագրական դժուարութիւն մը չկայ. — ամէն անգամ որ վօ ձայնը բառին սկիզբը հանդիպի՝ ո կը գրուի. բացի վոհմակ, վոհոսկ, վոռկ բառերէն (առոնցմէ առաջինն է գործածական. վոհոսկ այժմ կայ միայն վհոսկ ձևով. իսկ վոռկ՝ հիւսիս, հիւսիսային հով, կը գրուի նաև վօռկաս)։

Դարձեալ, ո կամ օ բառի մէջ բաղաձայնի քով նոյն հնչումն ունին. այս մասին կարելի չէ գտնել կանոն մը՝ որ ուղղագրութիւնը դիւրացնէ. որովհետև օ-ի ծագումը (առ բաղաձայնի քով) բոլորովին տարբեր է. հետևաբար միակ միջոցն է մեքենական վարժութիւն։

ՀՐԱՉԵԱՑ Յ. ԱՃԱՌԵԱՆ

Ստրասբուրգ, 12 Ապրիլ 1898.

ԱՍՈՐԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Ներկայ յօդուածս գրած է Ռուբէնս Դիւվալ և հրատարակած Ասիական Ամսաթերթի անցեալ տարուան ծ համարին մէջ։ Հեղինակս ըստ բաւականի ընդարձակ տեղեկութիւն տուած ըլլալով ասորական բանաստեղծութեան վերայ, աւելորդ չհամարեցի՝ թարգմանաբար քաղելով հրատարակել զայն, համոզուած լինելով՝ որ ինձ նման հետաքրքիրներ ալ գտնուին այս նիւթիս, և հաճութեամբ կարդան։

Հ. Ե. Ա.

ԱՍՈՐԱԿԱՆ բանաստեղծութեան մէջ պէտք չէ փնտռել ո՛չ տաղերգութեան (ode) պերճութիւնը և ոչ դիւցազներգութեան անպաճոյճ գեղեցկութիւնը։ Զուտ եկեղեցական բանաստեղծութիւն մ՚է այն, սկզբնաւորած և զարգացած ի ձեռն կղերական դասուն՝ յաչս որոյ լաւագոյն միջոց մ՚էր այս՝ ժողովրդեան մէջ տարածելու կրօնական դաստիարակուկութիւնը, և միանգամայն տալու կրօնական պաշտամանց՝ պահանջուած շքեղութիւնը։

Ասորական բանաստեղծութիւնն թէ՛ ինքն յինքեան և թէ իր ամբողջութեամբ նկատուած, գրականութեան ամենէն կարևոր ճիւղերէն մին է, որով և իր պատմութիւնն այլ կ՚արժէ գրուիլ։ Մեր նպատակն է հոս՝ հարևանցի ակնարկ մի տալ այս պատմութեան վերայ։

Ո՞ր աղբիւրէն առած է արդեօք ասորական բանաստեղծութիւնն իր ծագումն։ Միշտ դժուարին է ծագմանց խնդիրն — երբ խօսքն մարդկային մտաց մշակութեան մասին է — և պէտք է յաճախ ենթադրութեամբք բաւականանալ։ Մենք ապահովապէս կարող ենք կցել ասորական չափագիտութիւնը (prosodie) եբրայական չափագիտութեան հետ, որոյ հետ նա շատ աղերս ունի։ Երկու երկու խմբուած եբրայական տուներու (verset) կապակցութիւնը կամ զուգահեռականութիւնն իւր

digitised by A.R.A.R.@